

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

(Դո-կա ԳԼ ԺԵ. 11-32)

Առն միող էին երկու որդիք. ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն. հայր, տուր ինձ բաժին, որ անկանիցի յընչիցդ. և նա բաժանեաց նոցա զկեանսն, և և յետ ոչ բազում՝ աւուրց՝ ժողովեալ զամենայն կրտսեր որդւոյն՝ զնաց յաշխարհ հեռի. և անգլատնեաց զինչս իւր. զի կեայր անառակութեամբ, և իբրև սպառեաց զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, և սկսաւ ինքն չքաւորիլ: Եւ զնացեալ յարեաւ ի մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յագարակ իւր արածել խոզս: Եւ ցանկայր ընուլ զորովայն իւր յեղջերէն, զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա: Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ. քանի՛ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացալիցք, և ես աստ սովամահ կորնչիմ: Յարուցեալ զնացից առ հայր իմ, և ասացից ցնա. հայր, մեղայ յերկինս և առաջի քո, և ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո, արա՛ զիս իբրև զմի ի վարձկանաց քոց: Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. և մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն՝ և զթացաւ. յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւ նորա, և համբուրեաց զնա: Եւ ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո: Ասէ հայրն ցծառայս իւր. Վաղլազակի հանէք զպատմուճանն առաջին, և ագուցէք նմա, և սուք զմատանին՝ ի ձեռն նորա, և կօշիկս՝ յոտս նորա. և ածէք պարարակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք. զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ: Եւ էր երեց որդին նորա յագարակի. և մինչդեռ գայր և մերձ եղև ի սուռն, լուաւ զձայն երգոց և զպարուց, և կոչեցեալ սու ինքն զմի ի ծառայիցն՝ հարցանէր թէ զինչ իցէ այն: Եւ նա ասէ ցնա, զի եղբայր քո եկեալ է, և եզեն հայր քո զեզն պարարակ. զի ողջամբ ընկալաւ զնա: Բարկացաւ և ոչ կամէր մտանել. և հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա. պատասխանի ետ և ասէ ցհայրն. Այս քանի ամբ են՝ զի ծառայեմ քեզ, և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի, ուլ մի երբէք ոչ հտուր ինձ՝ զի ուրախ ե-

զեց ընդ բարեկամս իմ: Յորժամ եկն որդիդ քո այդ՝ որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ: Եւ ասեցնա. Որդեակ, դու Հանապազ ընդ իս ես. և ամենայն որ ինչ իմ է՝ քո է, այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ:

Այս առակը առակաների մարգարիտն է. նա այնքան սրտաշարժ է, այնքան ընդունակ մարդկային սիրտը շարժելու, ինչքան ոչ մինը աւետարանի առականերից—նա մի երկրորդ աւետարան է՝ աւետարանի մէջ: Այս առակը միեւնոյն ժամանակ մեր կեանքի պատմութիւնն է, մեր սրբի հայելին է. այստեղ երևում է՝ թէ ինչպէս մարդս իւր անմեղութեամբ ընկնում է յանցանքի՝ սխալանքի մէջ, ինչպէս յանցանքը տանում է նորան դէպի կործանումն, կործանումը՝ դէպի ապաշխարութիւն. ապաշխարութիւնը՝ դէպի հաւատ և հաւատը՝ դէպի Աստուծոյ ողորմութիւնը: Այս առակի հերոսը կրտսեր որդին է, նորա ամբողջ կիսանքը երեքի կորելի է բաժանել—ա, որդին հօր մօտ, բ, որդին հեռանում է հօրից և գ, որդու վերադարձն առ հայր:

Ա.

Կրտսեր որդին իւր մատաղ օրերը ընտանեկան յարկի տակն անցկացրեց, ինչ որ նորա սիրտը ցաւեցնում էր, հօրն էր գանգատւում, ինչ որ նորան ուրախացնում էր, նոյն հօրն էր յայտնում թէ տրտմութիւնը և թէ ուրախութիւնը հայրական յարկի տակն էր յայտնւում: Հայրը մի հարուստ և բարի մարդ էր. նա իւր որդւօց դաստիարակութեան վերայ մտածող և խորհող անձն էր. նա խիստ հայր էր:

Թէև այս այսպէս էր, բայց կրտսեր որդին գոհ չէր իւր վիճակից—նորան ծանր էր թվում հօր հրամաններին հետեիլ, նորա կամքով շարժուել. նա ցանկանում էր ազատ ինքնակամ լինել—ա՛խ երանի ես կարողանայի այն անել, ինչ որ իմ սիրտն է ուզում. ա՛խ երբ կլինի որ հօրս բռնութիւնից ազատուեմ, այն ինչ օր կլինի, երբ ես ինքս ինձ հրամայեմ . . . : Այս մտքերը քանի գնում էին նորա մէջ և այսպէս երիտասարդական ազատութիւնը օր ըստ օրէ խորն արմատներ էր ձգում նորա

մատուղ և անփորձ սրտի մէջ. նա հեռանում էր, նորա սիրտը սառուում էր դէպի հայրական սէրը, բայց դեռ չէր վստահանում իւր միտքը պարզ յայտնել. Ինչպէս մի անօթ, երբ լքցվում է, պէտք է թափուի, այսպէս և կրտսեր որդին իւր ներքինը մի օր հօր առաջ բաց արեց ասելով. « Տո՛ւր ինձ իմ բաժինը », ես կամենում եմ օտար աշխարհ գնալ. Երբ մի որդի հօրն այսպիսի առաջարկութիւններ է անում, ինչ կարծիք որ բարի հօրը մեծ տարակուսանաց մէջ է ձգում, ինչ կարծիք որ նա կը տխրէր, կզարմանար, կցաւէր և բժշկութեան միջոց կորոնէր, Հայրը նկատեց որ նորան իւր մտքից յետ կանգնացնելը անկարելի է, թշուառութիւնը և ապագայ դառն փորձերը միայն կարող են նորան բժշկել, ուստի համաձայնեց արձակել. նա այն հայրերից չէր, որոնք այս տեսակ հանգամանքներում ոյժ, ստիպմունք են գործ դնում. նա համոզված էր, որ այդ միջոցները ոչինչ բարի հետեանք չեն ունենալ, ուստի կատարեց որդու պահանջը. « Եւ բաժանեացնոցա զկեանս », — Հայրը տվեց նորան իւր բաժինը. Կրտսեր որդին թէ որքան էր ուրախ այս բանի համար, երևում է այն հանգամանքից, որ նա իսկոյն հեռանում է ընտանեկան յարկից դէպի օտարութիւն. նա հեռանում է տանից միայնակ՝ որոնելու իւր փնտռած ազատութիւնը. Զգոյ՜, կրտսեր մանուկ, տեսնե՛ք քո բաղձն ուր կը հանգի, երբ դու առանց Աստուծոյ ես գործ բռնում :

Բ.

Յանցանքի աղբիւրը՝ սկիզբը տեսանք, այժմ ծանօթանանք նորա յառաջապիմութեան հետ :

Կրտսեր որդին այժմ ինքն է իւր փէրը. նա ազատ է հօր հրակողութիւնից. ոչ մի ընտանեկան կէտ չի ստիպում նորան իւր սրտի հակառակը գործելու. նա իւր ժամանակը անց է կացնում ուրախ, զուարթ՝ իւր նման ընկերների հետ, ոչ մի յորդորու ձայն չի դիպչում նորա ականջին. նա ուտում է, խմում է, կեանք է վարում ըստ իւր ճաշակի, ըստ իւր քմաց : Եւ եթէ մինը վստահանում է նկատել նորան, նրանց պատասխանն է լինում — այդ քո բանը չէ, մե՛նք գիտենք, թէ ինչպիսի կեանք կվարենք : Այս ձևով կրտսեր որդին տարիների ընթացքում վատեց իւր ինչքը և առողջութիւնը, Այդ միւսնոյն միջոցին

նորա ապրած երկրում սուլ ընկաւ, նա սկսեց մոռալ: Յան-
ցանքն արգէն տուել է պտուղներ—մոռալ, խնդրել, հոգւով
աղքատ, մարմնով տկար, միայնակ օտարութեան մէջ, հեռու
հօրից, բարձի թողի արած ամենքից, ահա նորա ներկայ թշուառ
վիճակը:

Արգէն ժամանակ է կարծելու թէ նա կմտածէ յետ դառնալու,
բայց ով որ այս տեսակ յանցանքի մէջ ընկել է, նա լաւ գիտէ, որ
յանցանքի հետ կապուած է և մի տեսակ յամառութիւն կամա-
կարութիւն: Այսպէս էր և կրտսեր որդին—աւելի լաւ է կմեռ-
նիմ: քան թէ հօրս մօտ կդառնամ, առանց նորան ևս կարող եմ
ապրել: Նա ապրելու միջոցներ է փնտռում—դառնում է դէ-
պի իւր ընկերները, որոց նա երբեմն ուրախ ժամեր էր պատ-
ճտուել: Բայց ա՛խ, ի՞նչ ցաւալի փորձ—նոցանից մինը մեռել էր,
միւսը չէր ուզում ճանաչել նորան, երրորդը ուսերը շարժելով
ցաւում էր, որ չի կարող օգնել: Ել ոչ ոք չէ ուզում նորան օգ-
նութեան ձեռն կառկառել—ամէնք նորա բարեկամներն էին,
էլ ոչ ոք չէ ճանաչում նորան: Նա ստիպուած դիմում է Եփրէն-
քէն և ծառայութիւն խնդրում: Չատ թթու դեմքեր տեսաւ,
չատերի դուռը բաղխեց, բայց ամենայն տեղ անարգ խօսքերով
մերժուեց և ո՛վ կընդունէի մի այդպիսի մարդուն, որը իւր բո-
լոր հարստութիւնը այդ ձեւով վատնել է, սուլի ժամանակ ո՛վ
իւր հաց ուտողների թիւը կաւելցնէր: Սուր քունի գնում, մե-
ծանում է, նորա վիճակը օր ըստ օրէ դառնանում: մտածել
պէտքէ, ի՞նչ անել: Հիմա էլ չե՞ս դառնայ քո հօր մօտ: Ո՛չ, և
դարձեալ ոչ: Կրտսեր որդին գնաց նոյն երկրի մի հեթանոս քա-
ղաքացու մօտ և ուժով բախում է նորա դուռը՝ պաշտօն խընդ-
րելու, նա յանձնում է սորան իւր խոզերն արածելու—ի՞նչ ան-
տանելի վիճակ, մանաւանդ մի հրէի համար, նա ստիպուած է
Կայրէն օրէնքը սանակսի անել, հօրը ծառայել չկամեցողը, խո-
վեր է արահայնում, ազատ փէր էր կամենում լինել, քառայ է,
բաւականութիւն էր պտռում, քաղց, կարիք, անպատուու-
թիւն գտաւ: Մի ստորութիւնից մլուսին անցնելով, վերջապէս
ամենաստոր վիճակին հասաւ, սակայն դարձեալ չէ կամենում
վերադառնալ, դարձեալ չէ զղջում իւր յանցանքը: Նա հաշ-
վում է դեռ իւր ռոճիկը և դորանով կամենում է փրկել իւր
կեանքը, բայց աշխարհային ծառայութիւնը նորան ոչինչ չտո-

ւեց ՚նա գոհ էր խողերի կերակրով կերակրվելու, այդ ևս չկար: Սոված և զաղրած յանցաւորը տուն զառնալիս պէտք էր տան գործեր ևս կատարել: Թշուառութեան բաժակը սորանով լեցուել էր, էլ աւելի թշուառ չէր կարող լինել—նա կանգնած էր յանցանաց վհի վերայ, մի քայլից յետոյ յաւիտեան պէտք է կործանուէր. նա պէտք է կամ աւազակ կամ մարդասպան դառնար: Բայց ոչ, մի բառ դեռ ևս հնչում էր նորա սրտում—հրաժեմ, հրաժեմ եմ ես:

Ինչպէս որ կրակը այրում, հալում և մաքրում է ոսկին, այսպէս և կարիքը՝ սիրտը: Թշուառութիւնը ստիպում է նորան ինքնաճանաչութեան գալ—ամենի հետ ծանօթ եղողը իրան դեռ ևս չէ ճանաչում: Նա նոր է սկսում ծանօթանալ իւր հետ: Մինչև այժմ արքային էր ինկատի առնում—վայելք, աշխարհային բաւականութիւն, ինքնօգնութիւն, իսկ այժմ նայում է, դէպի իւր ներքինը, նոր գլխի ընկաւ, նոր հասկցաւ, նոր է ասում ինքն իրան ո՛հ, որքան մեծ օգնութիւն է պարունակում իւր մէջ կարիքը, նեղութիւնը, վիշտը թշուառութիւնը: Ո՛րքան յաճախ պէտք է մարդս արտաքին նեղութեանց մէջ ընկնէ, մինչև որ իւր ներքին թշուառութիւնը կնկատէ: Ո՛րքան յաճախ պէտք է մարդս թշուառութեան մէջ ընկնէ, միչև որ յանցանաց դառը պտուղները կճանաչէ: Այո՛ մտքերով, այս տեսակ մտածմունքներով լի՛ կրտսեր որդին ոտք դրեց մի նոր ճանապարհի վերայ — ճանապարհ ապաշխարութեան և հաւատոյ:

Ա, Ապաշխարութեան առաջին քայլը անառակ որդու այն էր, որ նա է-ր սխալանք ճանաչէ և այդ բանին նա հասաւ մեզ յայտնի՝ թշուառութեանց ձեռքով, նա ասում է—առաջ ես հօրս գանն էի, իսկ այժմ օգարս-նեան մէջ. առաջ ես որդի էի, այժմ՝ Զարուստ, առաջ ես քարի հայր ունէի, այժմ մի անգոն պարտ, առաջ հարուստ էի, իսկ այժմ աղքատ, առաջ ամեն բան ունէի, իսկ այժմ ոչինչ: Այս բոլորի պատճառը ես ինքս եմ. ես ուզում էի աւելի լաւ լինել քան թէ էի. ո՛հ, որքան սխալ եմ այն մարդիկը, որոնք առանց Աստուծոյ կամքի կամենում են մի գործ կատարել. նա զգում է իւր յանցանքը և այդ զգացողութիւնը տանում է նորան դէպի փրկութեան քայլը. այդ զգալն է որ նորան ասել է տալի. «Քանի վարձկանք իցեն

ի տան հօր իմոյ հացալիցք, և ես աստ սուլամահ կորնչիմ : Անառակ որդին չի մնում միայն զգացման աստիճանի վերայ կանգնած, նա ինքն է նոյնը և գործքով ցոյց տալ :

Բ. « Յարուցեալ գնացից առ հայր իմ » : Ի՞նչ է նշանակում « գնացից առ հայր իմ » նշանակում է, ես կամենում եմ ուրիշ մարդ դառնալ. նախկին ցանկութեանցս այլ ևս չհետեիլ, անաջուայ խելքով էլ չապրել. ես ուրիշ տեսակ ընկերներ կրփնուեմ այսուհետև բայց որքան ուշ, որքան դառնութիւնք են ճաշակում մարդիկ, մինչև որ նրանց սրտից կըհընչէ « գնացից առ հայր իմ » խօսքերը : Երբ մարդս սրտով ըզգում է իւր սխալը և ինքն է յետ դառնալ չար ճանապարհից, այն ժամանակ նա

Գ. Խառնակում է իւր յանցանքը բաց կերպով առանց ծածկելու — « Հայր մեղայ յերկինս և առաջի քո » : Լաւ նկատեցէք նորա խօսքերը, ինքն է ասում թէ յանցաւոր եմ. նա չի մեղադրում ուրիշներին ասելով թէ վատ ընկերներն ինձ գայթակղեցրին, այլ՝ ես, իմ թեթեամտութիւնը ինձ այստեղ հասցրեց. իմ սխալ ազատութեան մտքերն էին, որ բաժանեցին ինձ հօրիցս և Աստուածանից : Նա ոչ թէ միայն խոստովանում է իւր յանցաւոր լինելը, այլ և իւր յանցանքի մեծութիւնը և դորա համար ևս

Դ. Հէղ և Էմառն կերպով ասում է « ոչ ևս եմ արժանի կոչիլ որդի քո » արա՛ զիս իբրև զմի ի վարձկանաց քոց : Հեղութիւնն այսպէս ապաշխարութեան չորրորդ աստիճանն է : Բայց գնանք յառաջ :

Անառակ որդին կառաքում է որ հայրը կընդունէ իրան, ուստի աւելացնում է, « Յարուցեալ գնացից առ հայր իմ » : Քանի ժամանակ է որ նորա շրթուները այս քաղցր խօսքը չեն հնչել. ի՞նչպէս սրտի խորքից զգածուած կրկնում է այդ վաղուց մոռացուած քաղցր « հայր » խօսքը : Նա հաւատում է և համոզուած է, որ հայրը խիստ չի լինիլ դէպի իւր անցեալը, որ հօր շնորհը, ողորմութիւնը աւելի մեծ է, քան թէ իւր գործած յանցանքը : Եւ ահա այս հաւատը տալիս է նորան՝ անառակ որդուն այժ և զընթաց հայրենիք դառնալու, սուրբմէ դառնալք և մենք մտքով անառակ որդու հետ հանդիսատես լինելու հօր ընդունելութեան :

Գ.

Միայնակ, պանդխտութեան գաւազանը ձեռին, բոկոտն, պատառոտած շորերով, գզգզուած մազերով, հայեացքը վայր ձգած վերադառնում է կրտսեր որդին դէպի հայր դատարկ գրպանով՝ զլջմամբ, առանց նախկին երեւակայական ազատութեան մտքերի: Հայրը ընդունեց նորան բազկատարած: Նա նորան մտահան չէր արել, այլ « և մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն », ուրեմն հայրը նորան սպասում էր: Նա գըթաց նորան. ոչ մի յանդիմանական խօսք չասաց. կարեկցութիւն և արտասուք միայն կարելի էր տեսնել նորա դէմքի վերայ — Յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւ նորա, և համբուրեաց զնա: Որդին այս մեծ սիրոյ և կարեկցութեան առաջ կարմրում է, ամաչում է, յուզվում է, ալէկոծվում է նորա ներքինը և շարժուած սրտով հեկեկում է հօրն ասելով. « Հայր, մեղայ յերկինս և առաջի քո »: Հայրը, որին ամենայն ինչ յայտնի էր, թոյլ չտուեց անառակ որդուն իւր մեղայականը շարունակելու. նա ընդմիջեց որդու խոստովանութիւնն ասելով իւր ծառաներին. « Հանէք զպատմուածանն առաջին, և ազուցէք նմա, և տուք զմատանին ի ձեռն նորա, և կօշիկս յոտս նորա »: Ուրեմն հայրը հանել է տալի նորա նախկին մեղսալից շորերը և հազցնում է հաշտութեան նոր հանգերձ. նա տալիս է նորան մի մատանի ի նշան նոր սիրոյ. հազցնում է նոր կօշիկներ, որպէս զի նա այնուհետև արդարութեան ուղիով ընթանայ, զինաւորված լինի երթալու և բարի պատերազմը պատերազմելու: Նայիր ժողովուրդը և տես, ահա ձեզ հայրական սիրոյ վսեմ օրինակ. ահա ձեզ աստուածային պատիւեր, ահա ձեզ կատարեալ ներողամտութեան տիպար. ահա ձեզ մի կենդանի օրինակ, ուր նկատողութեան սուր խայթոցը մոռացվել է, ուր անցեալի պարտուց մուրհակը պատուվում է, ուր յանցանաց բիծը յաւիտեան ջնջվում է: Այսպէս զարդարելով հայրը որդուն տանում է դէպի ողորմութեան սեղանը, որ առատ է Աստուծոյ յաւիտեանական անվերջ բարիքներով: Հայրը ուրախ սրտով կոչում է. « այս որդի իմ մեռեալ էր » մեղքի մէջ և եկեաց » ապաշխարութեամբ և հաւատով, « կորուսեալ էր » հեռացել էր, Աստուածանից « և գտաւ » հայրական շնորհաց սե-

ղանի առաջ: Հօր այս ներքին ուրախութեանը մասնակցում են և երկնայինները, նոքա ևս իրանց ներքին ուրախութեան ձայները միախառնում են նորա հետ: Սորանով իսկապէս վերջանում է անառակ որդու առակը. որից երևում է, որ փրկութիւնը կարելի է միայն ապաշխարութեամբ և հասարակ ձեռք բերել:

Մեծ որդին, ըստ սովորականին, դաշտի աշխատանքից վերադառնալիս լսում է այս ուրախութեան ձայները. հարցնում է սորա պատճառը և երբ նորան յայտնում են իրողութիւնը, թէ իւր եղբայրը վերադարձել է (որին նա յաւիտեան կորած էր համարում) և երբ իմանում է, որ այդ ուրախութիւնը նորա գալստեան առթիւ է «բարձր» է: Լի մեծամտութեամբ և նախանձով կանգնում է նա դուրսը: Եթէ մի ուրիշ հայր էր եղել, որդւոյ այսպիսի վարեցողութեան համար անշուշտ խիստ կվարկէր, բայց սա «ելեալ արտաքս՝ ապաւէր զնա» (նա, որ կարող էր հրամայել): Սակայն նախանձոտ եղբայրը մերժում է հօր պղծանքը, մեղադրում է նորան և իւրեան արգարացնելով ասում է. «այս քանի ամբ են, զի ծառայեմ քեզ և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի»: Նա. առանց ամաչելու, հօրից վարձ է պահանջում — «ուլ մի ոչ ետուր ինձ, զի ուրախ եղեց ընդ բարեկամս իմ»: Բայց այդ չէ բոլորը, նա իւր եղբորը անգութ կերպով դատում է. նա նորան երբայր չէ անուանում, այլ՝ «որդի քո»: Նա զրպարտում է եղբորը — «որ եկեր գլեանըս քո ընդ պոռնիկս»: (նա որպեղից գիտէր այդ): Ուրեմն ոչ թէ փոքր, կրտսեր որդին է այժմ անառակ՝ կորուսեալ որդին, այլ մեծը: Յաւալի է հօր վիճակը — մինը գառաւ, միւսը կորցնում է: Երեց եղբայրը պարտաւոր էր, որպէս եղբայր, իւր եղբոր ուրախութեանը մասնակից լինիլ և ոչ թէ այդ տեսակ վարուէր: Բարի հայրը համոզում է նորան ներս գալու՝ ասելով. «խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ»: Բայց թէ մեծ որդին հօր այս խօսքերից յետոյ ներս է գալի թէ ոչ, Աւետարանիչը մեզ ոչինչ չէ ասում:

Ս. յժմ սիրելիք, դուք ինձ կհարցնէք, թէ ո՞վ է այս անառակ որդին, իսկ ես կպատասխանեմ, ո՞վ չէ մեզանից այս անառակ

որդին՝ աշխարհին մէջ: Մենք ամենքս էլ թողել, հեռացել ենք հայրական տանից, մենք ամենքս էլ ազատութիւն ենք փնտռել Աստուծոյ կամքից դուրս, մենք ամենքս էլ գտել ենք ժամանակաւոր կերպով երազած երջանկութիւնը, մենք ամենքս էլ ճաշակել ենք այդ ժամանակաւոր ազատութեան դառն պտուղները: մենք ամենքս էլ դիմել ենք մեր երջանկութեան օրերում գտած բարեկամներին, բայց աւանդ ինչ ենք տեսել, էլ ոչ ոք չէ ճանաչում իրանց աղքատացած՝ հին հարուստ բարեկամին, այդ ճիշտ է և ցաւալի է որ ճիշտ է, դա մեր կեանքի ամենօրեայ պատմութիւնն է: Բայց մեզանից քանիսն արդեօք կարող է նմանիլ այդ անառակին, որը մերկ, սոված, խղճի խայթից հալածուած՝ դառնում է տուն և սրտանց (ոչ թէ շրթութուններով) կոչում է «հայր, մեղայ յերկինս . . . արդեօք քանիսը մեզանից անառակի նման խոստովանել է, թէ ես եմ մեղաւորը և ոչ թէ այլք, արդեօք քանիսը մեզանից կործանման վճիղ դարձել է և նոր ճանապարհ է ընտրել, ճանապարհ ապաշխարութեան և հաւատոյ: Հաւատացէք, սիրելիք, նոքա՛ որոնք այսպէս կրառնան առ Հայրն երկնաւոր, առ խաչեալն Քրիստոս, այդպիսիք անշուշտ կլսեն Փրկչի մխիթարական խօսքերը — «եկայք առիս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»: այդպիսիք կարժանանան հօր սիրոյ համբուրին, հաւատացէք որ երկնաւոր Հայրը կհերէ այդպիսեաց և իւր ողորմութեան սեղանի վերայ կբազմեցնէ:

Աւրեմն, ո՛վ ապտուածասէր ժողովուրդ, դուք որ հաւաքուած էք Աստուծոյ տան մէջ նորա մխիթարական խօսքերը լսելու ապաշխարութեան արժանի պտուղներ բերէք՝ այս ապաշխարութեան օրերում, ձեզ մեղայ գոչողներին ներեցէք և գրկաբաց ընդունեցէք, մի մոռանայք որ այդպիսեաց սխալանքի պատճառը մենք ինքներս ենք, մի մոռանայք, որ դոցա պատասխանատու ենք Աստուծոյ ահեղ դատաստանի առաջ, մի անգամ ընդ միշտ վճռեցէք, որ հոյրական սէրը չպիտի շիջանի, չպիտի մարի դէպի յանցաւորը, նա միշտ վառ, միշտ փլուն պիտի լինի. մի անգամ ընդ միշտ վճռեցէք, որ հօրը վերագարձող մեղաւորի համար միշտ բաց պիտի կուղ նրանք աղքատ, մերկ, մեղաց մէջ թաթ դառնալիս:

Աղօթե՛նք Աստուծուն—Ո՛վ Տէր մեր Յիսուս Քրիստոս, տո՛ւր մեզ՝ քո հաւատացեալ ժողովրդին այն շնորհը, որ կարողանանք հօր նման յանցաւորին տեսնելուն պէս ընդառաջ վազել, տո՛ւր մեզ, ո՛վ Աստուած՝ հոգւոյ այն կարողութիւնը, որ մենք մեր սխալանքը նկատելուց յետոյ, անառակի նման դառնանք առ Հայր և գոչենք— « Հայր մեզայ յերկինս . . . տո՛ւր մեզ, ո՛վ Աստուած, այն երախտագիտութեան զգացմունքը, որ մենք քո անսահման սէրը և ողորմածութիւնը վայելելուց յետոյ նոյնպէս ողորմած գտանվինք դէպի մեր յանցաւոր մերձաւորները: Ամէն:

Միաբան Մողնոյ ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ
Ցփխիս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ս, ԷԶՄԻԱԾՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ.

Ձեռագիր № 1501 Այսմաւուր մեծագիր բոլորագիր: Գրիչն է Գրիգոր Երեւանցի 1689 թ. ի նորագաւիթ և Վաղարշապատ, Յիշատակարանը շատ ընդարձակ է և նորա բովանդակած պատմական տեղեկութիւնքը հետեւեալն է.

« Եւ արդ զօրութեամբ և կարողութեամբ ամենազօրին Աստուծոյ, եղև սկիզբն և վախճան այսմ մատենիս ի Վաղարշապատ և ի հայրապետանիստ Աթոռն սուրբ Էջմիածին: Բայց մեծ մասն և լիակատարն գրոցս գրեալ եղև ի գիւղաքաղաքն ի նորագաւիթ, ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեացս անուամբ սրբոյն Գեորգայ և սրբոյն Գրիգորի և սրբոյն Սարգսի և սուրբ Աստուածածնին և սուրբ Կարապետին և սուրբ Ծիրանաւորին և սուրբ Նահատակին, և զօրութեամբ և յաջողութեամբ, հովանաւորութեամբ և պահպանութեամբ աստուածամուկս սուրբ Նշանին Գեղարդայ, և սրբոյն Յակոբայ, հասեալ ձեռամբ ի հրեշտակէ Աստուծոյ ի տապանէն նոյի, և Ծիրանացն: Սատարութեամբ և սպասաւորութեամբ բարեպաշտօն կնոջն Սառա խաթունին և որդւոյն Յոհանիսին, որ զբազում աշխատանս արարին ի վերայ գրոցս: Եւ ի հայրապետութեան երիցս երանեալ և երջանկացեալ մեծի և փառաւորի տեանն Եղիազարու Վաթուղիկոսի՝ խրոխտի և հարկուի ի վերայ այլազգեաց, և որպէս ասէ մարգարէն՝ եթէ ոչ Տէր զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրև զԱդամ՝ լինէաք: նոյնգունակ եթէ ոչ էր